

«26» հունիս 2019թ.

No 1747 - Լ

ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԵՆԴԱՆԻ ԴՈՆՈՐԻՑ ԵՐԻԿԱՄԸ ՎԵՐՑՆԵԼՈՒ,
ՎԵՐՑՐՎԱԾ ԵՐԻԿԱՄԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԵՐԻԿԱՄԻ
ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ/ՏԵՂԱԴԻՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 19.3 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) Փոխպատվաստման նպատակով կենդանի դոնորից երիկամը վերցնելու
կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 1-ի,

2) «Փոխպատվաստման նպատակով վերցրված երիկամի մշակման կլինիկական
ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 2-ի,

3) «Երիկամի փոխպատվաստման/տեղադրման կլինիկական ուղեցույց»-ը՝
համաձայն Հավելված 3-ի,

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
աշխատակազմի Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Լ.Բաբախանյանին՝

ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության
պաշտոնական կայքում:

3. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների
տնօրեններին առաջարկում եմ՝ սույն հրամանով հաստատված ուղեցույցները
ընդունելի գիտություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ